



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ**

« 23 » հոկտեմբերի 2019թ.

№ 2/6039-Ա

Հ Ր Ա Մ Ա Ն

**ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 5-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի 2019 թվականի թիվ 67/2019 եզրակացությունը

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Ղեկավար մարմինների և պաշտոնատար անձանց՝ սահմանված կարգով տրված հանձնարարականների և ընդունած որոշումների կատարումը, հարկային ծառայությունների և հարկային ծառայողի վարքագծի կանոնները խախտելու համար, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության ընթացիկ հսկողության թիվ 15 /Կոտայքի/ բաժնի գլխավոր հարկային տեսուչ Արմեն Արարատի Հովհաննիսյանի նկատմամբ կիրառել «գրավոր նկատողություն» կարգապահական պատասխանատվությունը:

2. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի անձնակազմի կառավարման վարչության պետ Կ.Գրիգորյանին՝ սույն հրամանն հրազեկել ողջ անձնակազմին:

 Recoverable Signature

X 

ԴԱՎԻԹ ԱՆԱՅԱՆ

Signed by: ANANYAN DAVIT 2010710142

ԴԱՎԻԹ ԱՆԱՅԱՆ

